ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Գ.ՇԵՆԻԿ-ԲԱՂՐԱՄՅԱՆ-ԵՐԵՎԱՆ» ԹԻՎ 214 ԵՎ «ԲԱՂՐԱՄՅԱՆ-ԵՐԵՎԱՆ» ԹԻՎ 228 ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԸ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրություն՝ հետևյալ թափուր ավտոբուսային երթուղիների **ժամանակավոր սպասարկման** համար՝

N ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ՝			
	անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	սպասարկման համար պահանջվող հիմնական և պահուստային ավտոբուսների քանակը
1.	«գ.Շենիկ-Բաղրամյան-Երևան» թիվ 214	գ.Շենիկ	Երևան	1 հիմնական, 1 պահուստային
2.	«Բաղրամյան-Երևան» թիվ 228	Բաղրամյան	Երևան	2 հիմնական, 1 պահուստային

ՑԱՆԿ

ԵՐԹՈՒՂԻՆ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ N 2 ձևի:

2. Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3. Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Փաթեթները բացելու օրը, ժամը և վայրը՝ 2025 թվականի փետրվարի 7-ին, ժամը 11:00, ք. Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր հատկացնելու համար գնահատման անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2025 թվական փետրվարի 10-ին, ժամը 14:00, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք

Դիմումը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, մինչև 2025 թվականի փետրվարի 6-ը, ժամը 17:00, ք. Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար՝ 010511356

Էլեկտրոնային փոստի հասցեն՝ mtai.secretariat@gmail.com:

Երթուղու չվացուցակին կարելի է ծանոթանալ https://www.mtad.am/pages/timetables հղումով: